**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5**
**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան «24» 05. 2019թ.
ժամը $15^{00}$

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, Հ. Մելիքյան /ԳԱՊ/,
ՀՀ ՊՆԱ ՎՏ վարչության պետ, Լ. Խաչատրյան,
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կոմունալ-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, Գ. Ռիստյան,
ՀՀ ՊՆԱ ՎՏՎ հրատարակչական բաժնի պետի տեղակալ, Ա. Մուրադյան:
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Գ. Տերյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Գ. Տերյան)

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Գ. Տերյան)

1.1 Մասնակիցների «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը /հավելվածներ 6 և 6.1/ առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Հպարտ Քաղաքացի» ՍՊԸ և «Նովա Թրեյդ» ՍՊԸ: «Հպարտ Քաղաքացի» ՍՊԸ կողմից հավելված 6.1 ներկայացված 1-ին չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված չէ հրավերով նախատեսված «ներկափոշու պարունակությունը՝ 510 գրամ» տեղեկությունը, իսկ 19-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված չէ «տուփի վրա տպագրված քաշը՝ 356 գրամ կամ ավել» տեղեկությունը, իսկ «Նովա Թրեյդ» ՍՊԸ կողմից հավելված 6.1 ներկայացված 7-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է «80գր Ա4 թղթի էջի 5% ծածկույթի դեպքում 215000 էջ DC, WC 77xx – 231000 էջ տպագրման ռեսուրսով», այնինչ հրավերով պահանջվել է 80գր Ա4 թղթի էջի 5% ծածկույթի դեպքում առնվազն 240000 էջ տպագրման ռեսուրսով /հիմք պատասխանատու ստորաբաժանման կողմից 27.05.2019թ. ներկայացրած մասնագիտական եզրակացությունը/:Ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և ծանուցել վերոնշյալ մասնակիցներին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են անհամապատասխանությունները և նիստը շարունակվել է:

***ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն, մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով չի գնահատվում:***

1.2 30.05.2019թ. որակավորման նիստի ավարտի օրը՝ հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակիցներ և վերջիններիս անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Գ. Տերյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող | Հ. Մելիքյան |
| Գնահատող | Լ. Խաչատրյան |
| Գնահատող | Գ. Ռիստյան |
| Գնահատող | Ա. Մուրադյան |
| Գնումները համակարգող՝ | Գ. Տերյան |